

## ՍՈՒՐԲ ԳԵՂՐԳ ԶՈՐԱՎԱՐ

**Սիրելի հաւատուցեալներ.**

Երաքանչիւր անհատի կեանք մի պատմութիւն է: Անհատը իր հոգէաշխարհով, ժամանակին լծորդուած ինքնութեամբ, իր եսով ու վարքով տարբերում է մարդկանցից, իր շուրջը ապրող բազմութիւնից: Հակառակ առկայ նմանութիւնների եւ ընդհանրութիւնների, իրաքանչիւր անհատի կեանք եկալի է իր էութեամբ: Ժամանակի մէջ այն գծագրում է տառապանքի լիութեամբ, անսահման նորիրուածութեամբ եւ նոյնիսկ, հաւատի համար նահատակուելու եւ մարտիրուանալու պատրաստակամութեամբ:

Սր. Գեղրգի կեանքի պատմութիւնը եւս տարբեր է եւ ունի իր առանձնայատկութիւնները: Նա ապրել է կատարեալ քրիստոնեային յատուկ անբասիր, ապաշխարութեամբ մեղքից ապառագրուած, հաւատրով փրկուած ու արդարացուած մի կեանք: Նրա կեանքը, իրօք, ամբողջական է եւ աւարտուն, սակայն ոչ անցեալի ու յուշի վերածուած: Նրա կեանքը, բազմաթիւ քրիստոնեանների համար այսօր եւս հոգեկան ներնչանքի մեծ աղբիւր է հանդիսանում, իսկ շատերի համար՝ որդեգրուած կենսակերպ: Նա Սուրբ Հոգու ընորին ընդունած, Աստծոյ ներգործութիւնն իր մէջ կենդանի պահած եւ Նրա հետ մշտապէս հաղորդութեան մէջ եղած անհատ էր: Այդուհանդերձ, նրան վերապահուած էր իր ժամանակի եւ սերնդի նախանձափնդիր եւ բաջապահու քրիստոնեայի ճակատագիր:

Գինուորականութիւնը ընտրելով իբրեւ կեանքի ասպարէկ, Սուրբ Գեղրգը դեռ պատանի հասակում աչքի է ընկնում իր համարձակութեամբ ու փայլում իր սիրազործութիւններով: Նա նոյնիսկ չի վարանում բաղաքի հրապարակի վրայ կախուած չարաբարոյ Դիոկղենիանու Կապէր հրովարտակը պատից իջեցնել եւ պատուել: Հրովարտակով կայսրը հրահանգում էր բողոք քրիստոնեաններին փոփոք մասուցել կուռքերին, իսկ ընդինացողներին՝ մահուան դատապարտել: Հեթանոս կայսեր ընկալմանը Սուրբ Գեղրգի այս յանդուզն քայլը ամսաւելի չաշարանքներից յետոյ պէտք է պատժուէր մահուամբ: Կայսեր կողմից խոստացուած ոչ մի պաշտօն եւ պարզեւ նրան չկասեցրին Յիսուս Քրիստոսին Աստծոյ Որդի եւ Տէր դաւանելուց: Պատանի տարիքում քրիստոնեայի բարձր գիտակցութեամբ եւ օրինակելի հեկութեամբ նա ընտրել է մարտիրոսութիւնը: Մարտիրոսութիւն, այսինքն մահը, որը սակայն պիտի առաջնորդէր նրան փառաց Սուրբ պատակի եւ արժանացնէր իրաքանչիւր քրիստոնեայի այնքան բաղձապի երկմից արքայութեան:

Սուրբ Գեղրգը, թէեւ ակզութեամբ հայ չէ, սակայն Հայ Եկեղեցին ընդունում է նրան եւ վաղ միջնադարում արդէն ընդգրկել է Հայ Եկեղեցու Տօնացոյցի մէջ: Հայկական բազմաթիւ Եկեղեցիներ անուանակոչուել են նրա անունով, իսկ նրա տօնին բազմաթիւ ուխտաւորներ եւ հաւատացեալներ են դիմում Սուրբ Գեղրգի բարեխօսութեանը: Նա մեծ սէր ու ժողովրդականութիւն է վայելու հայ քրիստոնեանների շրջանակում:

Սիրելիներ, Սուրբ Գեղրգի նահատակութեան ու վարքի հետ մնացել է իր անձնամուէր կեանքի ճշմարտութիւնը, որն իբրեւ հոգեւոր պատզամ ուղղուած է մեզ՝ ինել քաջապահու մէր հաւատքը վկայելու համար, Յիսուս Քրիստոսին մինչ ի մահ Աստծոյ Որդի եւ Տէր դաւանելու մէջ եւ յանուն Նրա մէր անձն ու աշխարհը ուրանալու գործում, որպէսի մենք եւս, երբ բռնենք յաւերժի ճամքան՝ արժանանանք փառաց պատկին եւ Տիրոց տեսութեամբ, Որին վայել է փառք, պատի եւ իշխանութիւն, այժմ եւ միշտ յախտեան յախտենից ամէն:

**ԿՈՐԻԿ ԱԲԴ. ԲԱՂԱՍՍԱՐԵԱՆ**